# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 57-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. 2016թ. Դիլիջան համայնքի 9 ամսվա բյուջեն հաստատելու մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
2. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան
3. Գույքի օտարման մասին:
Զեկ. Ա. Սանթրոսյան

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 58-Ն

## 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 9 ԱՄՍՎԱ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել 2016 թվականի համայնքի 9 ամսվա բյուջեն՝
   ա/ եկամուտների գծով - 527723.7 հազար դրամ,
   բ/ ծախսերի գծով -570942.1 հազար դրամ,
   գ/ դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ- 43218.4 հազար դրամ:
2. Հաստատել համայնքի 9 ամսվա բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1):
3. Հաստատել համայնքի 9 ամսվա բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հատված 2):
4. Հաստատել համայնքի 9 ամսվա բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 3):
5. Հաստատել համայնքի 9 ամսվա բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ (հատված 4):
6. Հաստատել համայնքի 9 ամսվա բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ (հատված 5):
7. Հաստատել համայնքի 9 ամսվա բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6):
8. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
9. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

ա/ գանձապետական հաշվի 2016 թվականի առաջին եռամսյակի ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2016 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար,
բ/ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15-%ը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՅԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՅԱԿ

8. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

9. ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

10. ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

11. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ

12. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 59-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու անդամներից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների կազմը սահմանել 5 և ընդգրկել հետևյալ ավագանու անդամներին.

1) Դավթյան Գառնիկ

2) Դավթյան Սամվել

3) Մնացականյան Վարդան

4) Հախվերդյան Վարդան

5) Թամրազյան Արգամ

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 60-Ա

## ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ համայնքի Օրջոնիկիձեի փողոցի թիվ 67 շենքի թիվ 38, երեք սենյականոց բնակարանն ուղղակի վաճառքի միջոցով վարձակալին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող Օրջոնիկիձեի փողոցի թիվ 67 շենքի թիվ 38, երեք սենյականոց՝ 75,93 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը, վարձակալին ուղղակի վաճառքի ձևով, 113895 դրամով (մեկ քառակուսի մետրի համար սահմանելով 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

5. ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ